

ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ՀՈՒՆՎԱՐ 2026

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-1-Ն (ընդունված՝ 20.01.2026թ., ուժի մեջ՝ 21.01.2026թ.)

- Հունվարի 27-ը սահմանվել է որպես հայրենիքի պաշտպանության համար զոհվածների հիշատակի օր, և համարվում է ոչ աշխատանքային օր:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-2-Ն (ընդունված՝ 23.01.2026թ., ուժի մեջ՝ 03.02.2026թ.)

- Հստակեցվում է, թե ինչ չափանիշների պետք է բավարարի Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունը ՀՀ-ում կազմակերպվող ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու հնարավորություն ստանալու համար:
- Նաև հստակեցնում է հավատարմագրման դիմումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնելու կարգը: Սահմանվել է, որ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ կարող են կատարվել ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 3 օր առաջ, բացառությամբ այն դեպքի, երբ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպության կամ հիմնադրամի հավատարմագրած դիտորդների ցանկը լրացվում է ՀՀ քաղաքացիություն չունեցող անձով, որը կարող է իրականացվել ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 15 օր առաջ:
- Փոփոխություններ են կատարվել նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հասարակական կազմակերպության կամ հիմնադրամի հավատարմագրման մասին դիմումը մերժելու կարգավորումներում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին ՀՕ-3-Ն (ընդունված՝ 20.01.2026թ., ուժի մեջ՝ 03.02.2026թ.)

- Հայաստանի և Վրաստանի միջև հետընդունման (ռեադմիսիայի) հարցերը կարգավորող միջազգային պայմանագրի կնքումը՝
 1. հնարավորություն կտա քայլեր իրականացնել երկու պետությունների տարածքներում անօրինական կարգավիճակում գտնվող ինչպես սեփական քաղաքացիների, այնպես էլ՝ երրորդ պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հայտնաբերման և վերադարձի կազմակերպման հարցերում,
 2. իրավական հիմք կստեղծի հետընդունման գործընթացի կարգավորման համար՝ սահմանելով անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ժամկետները և այլ հարցեր:

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-4-Ն (ընդունված՝ 20.01.2026թ., ուժի մեջ՝ 12.02.2026թ.)

- Հայաստանի Հանրապետությունում չհաշվառված տրանսպորտային միջոցներով կատարված իրավախախտումների գործերով վարույթի առանձնահատկությունները կիրառելի կլինեն նաև ՀՀ-ում հաշվառված տրանսպորտային միջոցներով «Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանված՝ օտարերկրացի համարվող և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ չունեցող անձանց կողմից կատարված և օրենքով քննության ենթակա գործերով կայացված վարչական ակտերի նկատմամբ:

ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՕՐԵՆՔՆԵՐ*

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-82-Ն (ընդունված՝ 18.04.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Փոփոխություններ են կատարվել ՀՀ հարկային օրենսգրքում բնօգտագործման վճարների մասով: Կենսապաշարների օգտագործման վճարների հարկման բազան ընդլայնվել է՝ փաստացի օգտագործված ծավալների փոխարեն այժմ ընդգրկելով՝
- ա. բուսական (բացառությամբ բնափայտի կամ երկրորդական անտառանյութի) և կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարների համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ լիազոր մարմնի կնքած կենսապաշարների օգտագործման պայմանագրով կամ տրամադրած լիցենզիայով սահմանված կենսապաշարի ծավալը, քաշը կամ միավորը (հատը) կամ չափման այլ ֆիզիկական բնութագրիչը, իսկ բնօգտագործման վճարի բազայի չափաքանակը գերազանցելու կամ գրոյական չափաքանակի դեպքում՝ փաստացի օգտագործված ծավալը, քաշը կամ միավորը (հատը) կամ չափման այլ ֆիզիկական բնութագրիչը,
- բ. բնափայտի կամ երկրորդական անտառանյութի փաստացի օգտագործված ծավալը: Միաժամանակ, վերանայվել են կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-4-Ն (ընդունված՝ 22.01.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Փոփոխություններով նախատեսվում է քաղաքացիություն ստանալու ընթացակարգը լիովին համապատասխանեցնել էլեկտրոնային հարթակի գործունեությանը՝ նախատեսելով, որ ՀՀ քաղաքացիություն ստանալու գործերն ընդունվում, և դրանց ընթացք է տրվում քաղաքացիության գործերի կառավարման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով:
- Ամրագրվել է նաև, որ ՀՀ քաղաքացիությունը դադարեցվում է կեղծ կամ սխալ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում, եթե անձի կողմից կեղծ կամ սխալ փաստաթղթեր կամ կեղծ տվյալներ ներկայացնելը հիմնավորվել է օրենքով սահմանված կարգով, և արարքը կատարելու պահից չի անցել 10 տարի, նախկին ջ տարվա փոխարեն: Տվյալ դեպքում, սակայն, անձի քաղաքացիությունը չի կարող դադարեցվել, եթե դա կհանգեցնի անձի՝ քաղաքացիություն չունենալուն:

«Կատարողական վարույթի մասին» օրենք և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-179-Ն (ընդունված՝ 11.04.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» 1998 թվականի մայիսի 5-ի օրենքը՝ հարակից օրենքներում հղումների համապատասխան փոփոխությամբ:
- Նոր օրենքը նախատեսում է կարգավորումներ, որոնք ավելի բարենպաստ իրավիճակում են դնում կատարողական վարույթի մասնավոր մասնակիցներին: Մասնավորապես՝ փոփոխվում է մոտեցումը արգելադրված գույքի թույլատրելի տնօրինման, արգելադրված գույքի օգտագործման իրավունքը սահմանափակելու և այն առգրավելու նկատմամբ: Այս առնչությամբ սահմանվում են մի շարք գործիքակազմեր, որոնք հնարավորություն են ընձեռնում կատարողական վարույթի մասնակիցներին իրենց արգելադրված գույքից օգուտներ ստանալ:
- Ընդլայնվում են նաև կատարողական վարույթի կողմերի տնօրինչական հնարավորությունները, օրինակ՝ կողմերի համաձայնությամբ կատարման հետաձգման, տարաժամկետման, կատարման կարգ կամ եղանակ սահմանելու կամ դրանք փոփոխելու հնարավորության սահմանում առանց դատական կարգի, պարտապանի գույքի հարկադիր աճուրդին պահանջատիրոջ մասնակցության հնարավորության ընդլայնում՝ նրան իրավունք վերապահելով որոշակի դեպքերում վճարելու ոչ միայն դրամով, այլ նաև իր պահանջի հաշվանցով, և այլն
- Ներդրվում է կատարողական վարույթին մասնակցող երրորդ անձանց ինստիտուտը:
- Նախատեսվում են նաև դրույթներ, որոնք պաշտպանում են ձեռնարկատիրական գործունեությունը, օրինակ՝ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գույքի վրա բռնագանձում տարածելու հատուկ հերթականություն է սահմանվում, ներդրվում է շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավի ինստիտուտի անալոգիայով շրջանառության մեջ գտնվող ապրանքների արգելանքի ինստիտուտ, որը չի խաթարի ապրանքների շրջանառությունը և այլն:

*Սույն բաժինը ներառում է այն օրենքները, որոնք ընդունվել են ավելի վաղ, սակայն ուժի մեջ են մտնում հունվար ամսին ընդունված և նույն ամսին ուժի մեջ մտած օրենքները ներկայացված են տեղեկագրի առաջին բաժնում և չեն կրկնվում սույն բաժնում:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-142-Ն և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-143-Ն (ընդունված՝ 11.04.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Սահմանվում է բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում լիազորությունների հստակ բաշխումը պետական մարմինների, մարզպետների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:
- Սահմանվում են կառուցապատողի հիմնական պարտականությունները՝ շենքը շահագործման հանձնելուց հետո ապահովել կառավարման մարմնի ընտրությունը, փոխանցել նախագծային փաստաթղթերը և ապահովել, որ շինությունների օտարման դեպքում սեփականատերերին փոխանցվի նաև ընդհանուր բաժնային սեփականության համապատասխան բաժնեմասը:
- ՎԻՎՕ-ով սահմանվում է զանցակազմ նոր կառուցվող կամ կառուցված բազմաբնակարան շենքի կառուցապատողի կողմից բազմաբնակարան շենքի կառավարման բնագավառում օրենքի պահանջները խախտելու համար:

«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-161-Ն (ընդունված՝ 29.05.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Նախատեսվում է, որ կրիպտոակտիվի օտարման կամ այլ հիմքով դրա նկատմամբ սեփականության ձեռքբերման դիմաց վճարումը և վճարման ստացումն իրականացվում են անկանխիկ ձևով՝ անկախ վճարման ենթակա գումարի չափից:
- Ամրագրվում է նաև, որ կրիպտոակտիվներով ծառայություն մատուցող անձանց ծառայությունների դիմաց վճարումը և վճարման ստացումն իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե վճարումը կամ վճարի ստացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-472-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 03.01.2026թ.)

- «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենսդրական փաթեթի շրջանակներում ՎԻՎՕ-ն լրացվում է նոր հոդվածով, որով սահմանվում է վարչական պատասխանատվություն առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում ապահովագրված անձանցից օրենքով չնախատեսված վճարներ գանձելու կամ ապահովագրական փաթեթում ներառված բժշկական ծառայությունների կամ դեղերի տրամադրումը մերժելու համար:

«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-95-Ն և «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-96-Ն (ընդունված՝ 18.04.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026)

- 2026 թվականի հունվարի 1-ից մասնավոր պահանջարկի գործունեության լիցենզիայի համար պետական տուրքը նախկին 500,000 ՀՀ դրամի փոխարեն սահմանվելու է 3,000,000 ՀՀ դրամ:
- Սահմանվել է նաև լիցենզավորված մասնավոր պահանջարկի կազմակերպությունների կողմից լիազոր մարմնին իրենց գործունեության վերաբերյալ կիսամյակային կտրվածքով հաշվետվություն ներկայացնելու պահանջ:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-109-Ն և Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-110-Ն (ընդունված՝ 29.05.2025թ., ուժի մեջ՝ 31.01.2026թ.)

- Փոփոխություններով նախատեսվում է, որ Բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության իրականացման ժամանակ լիցենզավորման կարգերով սահմանված լիցենզիայի պարտադիր պայմանների խախտման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում կրթության պետական կառավարման լիազորված մարմինը օրենքով սահմանված կարգով կամ կրթության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի միջնորդության հիման վրա օրենքով սահմանված կարգով բարձրագույն ուսումնական հաստատության նկատմամբ կիրառում է նախագույշացում կամ դադարեցնում է լիցենզիայի գործունեությունը:
- Բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության իրականացման ժամանակ լիցենզավորման կարգերով սահմանված լիցենզիայի պարտադիր պայմանների նկատմամբ վերահսկողությունն այսուհետ իրականացնում է կրթության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին):
- ՎԻՎՕ-ով նախատեսվում են համապատասխան զանցակազմերը:

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-292-Ն (ընդունված՝ 12.06.2024թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Լրացումներով համալրվում են օրենսգրքի հասկացությունները. ավելացվում է «QR գծիկավոր կող» եզրույթը և այս եզրույթի ներդրմամբ համապատասխանեցվում են այլ հոդվածներ:
- Սահմանվում է, որ հարկային մարմնի տեղեկատվական բազայից կամ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի՝ հարկ վճարողի անձնական էջից QR գծիկավոր կողի պարունակությամբ արտատպված փաստաթղթերը հարկային մարմնի կողմից լրացուցիչ վավերացման կարիք չունեն:
- Ամրագրվում են նաև նոր պարտավորություններ. հարկ վճարողը հնարավորություն ունի արտատպելու կամ ներբեռնելու հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի իր անձնական էջում առկա փաստաթղթերը, ինչպես նաև QR գծիկավոր կող պարունակող այն փաստաթղթերը, որոնց ցանկը հաստատում է հարկային մարմնի ղեկավարը: QR գծիկավոր կող պարունակող արտատպված կամ ներբեռնված փաստաթղթում արտածվում է արտատպման կամ ներբեռնման պահի դրությամբ առկա տեղեկատվությունը: Արտատպված և ներբեռնված փաստաթղթերը պարունակում են QR գծիկավոր կող, և նշված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն: QR գծիկավոր կող պարունակող փաստաթղթերը, ըստ անհրաժեշտության, ընդունվում են կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից:
- QR գծիկավոր կող պարունակող՝ արտատպվող կամ ներբեռնվող փաստաթղթերի QR գծիկավոր կողի նույնականացման կարգը սահմանում է հարկային մարմինը:

«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-516-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Փոփոխությամբ անցումային ժամանակահատվածում թույլատրվում է կրիպտոակտիվներով կանխիկ գործարքների կատարումը՝ պայմանով, որ գործարքի գումարը չի գերազանցում 300 հազար դրամը և անկախ գործարքի գումարից՝ ծառայություններ մատուցող անձն իրականացնում է հաճախորդի պատշաճ նույնականացում:

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և հարակից օրենքների մասին ՀՕ-339-Ն (ընդունված՝ 11.09.2024թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- «Պետական տուրքի մասին» օրենքում ավելի հստակ է ձևակերպվել տարեկան և եռամսյակային պետական տուրքի համամասնական նվազեցման մեխանիզմը: Հստակ ամրագրվել է, որ նվազեցումը կիրառվում է անկախ նրանից՝ տուրքը վճարված է, թե ոչ: Ավելացվում է դրույթ ըստ որի ԱԶ-ի հաշվառումից դուրս գալու, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության ժամանակավոր կամ անժամկետ դադարեցման, սնանկ ճանաչվելու դեպքերում տարեկան պետական տուրքը պետք է վճարվի մինչև այն օրը, երբ առաջանում է վճարման պարտավորության դադարեցման որևէ հիմք:
- «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-340-Ն օրենքով նախատեսվում է ընթացակարգային նոր պահանջ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարման առնչությամբ. եթե ֆիզիկական անձը մահացել է, ապա լիազոր մարմինը պարտավոր է մահվան փաստը իրեն հայտնի դառնալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունել գործունեության դադարեցման մասին որոշում: Սահմանվում է նաև, որ ԱԶ-ի գործունեության դադարեցումը այլևս չի հանդիսանում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարեցման ինքնուրույն հիմք:
- «Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-341-Ն օրենքով կատարվել են համանման փոփոխություններ, ըստ որոնց ԱԶ-ի գործունեության դադարեցումը այլևս չի հանդիսանում լիցենզիայի գործողության դադարեցման ինքնուրույն հիմք, ֆիզիկական անձի մահվան դեպքում լիազոր մարմինը պարտավոր է մահվան փաստը իրեն հայտնի դառնալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունել լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին որոշում:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՕ-376-Ն (ընդունված՝ 11.09.2024թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- ՀՀ հարկային օրենսգրքի փոփոխություններով հնարավորություն կտրվի շահութահարկ վճարողներին՝ իրենց համախառն եկամտի մինչև 2.5%-ի չափով պետական հանրակրթական դպրոցներին, ԲՈՒՀ-երին և նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթական հաստատություններին իրականացված նվիրատվությունները նվազեցնել համախառն եկամտից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-382-Ն և Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-383-Ն (ընդունված՝ 13.11.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Նախատեսվում է, որ ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով կամ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա շրջանավորված ապրանքներ օտարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված պատասխանատվության շրջանակներում որոշակիացնել խախտում համարվող արարքները և ավելացնել գործող տուգանքների չափերը՝ կիրառելով առավել խիստ վարչական պատասխանատվության միջոցներ: Խախտում համարվող արարքների կանխարգելման նպատակով ծխախոտի արտադրանքի և խմիչքների համար որպես լրացուցիչ վարչական տույժի տեսակ՝ նախատեսվում է վարչական իրավախախտման անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում:
- Սահմանվում է նաև քրեական պատասխանատվություն իրացման նպատակով կեղծ հսկիչ (նույնականացման) նշաններ պատրաստելու, պահելու, տեղափոխելու, առաքելու, ձեռք բերելու կամ դրանք օգտագործելու կամ իրացնելու համար:

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-415-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Նախատեսվում է իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց ծանուցման նոր եղանակ: Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծանուցումն իրականացվելու է անհատական ծանուցումը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում տեղադրելու միջոցով:
- Ֆիզիկական անձանց ծանուցման վերաբերյալ նախատեսվում է, որ եթե ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստում տեղադրվելուց 3 օր հետո բացակայում է ֆիզիկական անձի կողմից պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու վերաբերյալ էլեկտրոնային հավաստումը, ապա ծանուցումը «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքով սահմանված հիբրիդային առաքանու միջոցով պատվիրված նամակով ուղարկվում է անձի հաշվառման հասցեով:

«Կիբեռանվտանգության մասին» օրենք և այլ հարակից օրենքներ ՀՕ-442-Ն (ընդունված՝ 04.12.2025թ., ուժի մեջ՝ 04.01.2026թ.)*

- Կարգավորվում է կենսական նշանակության ոլորտներում տեղեկատվական համակարգերի կամ կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների կիբեռանվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես, ծառայություն մատուցող սուբյեկտների շրջանակը, կենսական նշանակության ոլորտները, կիբեռմիջադեպերի հայտնաբերման, դրանց մասին ծանուցման, կանխարգելման, կիբեռանվտանգության ոլորտի պետական կառավարման համակարգի մարմինների և դրանց լիազորությունների շրջանակի, սույն օրենքի պահանջների պահպանման նկատմամբ մշտադիտարկման, պատասխանատվության, կիբեռանվտանգության աուդիտի, ինչպես նաև կիբեռանվտանգության հետ կապված այլ հարաբերություններ:

«Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-506-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 08.01.2026.)

- Սահմանվում է, որ գնահատումը պարտադիր է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օտարման դեպքերում, բացառությամբ պետական կամ համայնքային չկառուցապատված հողերի ոչ աճուրդային կարգով օտարման դեպքերի:

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-487-Ն (ընդունված՝ 17.12.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածով էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների համար մինչև 2026թ. հունվարի 1-ը սահմանված ավելացված արժեքի հարկի արտոնության կիրառման ժամկետը երկարաձգվել է, այսպես
- ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000, 8704 60 000 և 8711 60 ծածկագրերին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների (այդ թվում՝ ԵԱՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող) «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպումը կամ ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծումը և ազատ շրջանառության նպատակով բացթողումը կամ ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծումը կամ ՀՀ տարածքում օտարումն ազատվում է ԱԱՀ-ից մինչև 2026թ. հունվարի 31-ը,
- Իսկ 2026թ. փետրվարի 1-ից մինչև 2026թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ վերոնշյալ արտոնությունը կկիրառվի միայն այն տրանսպորտային միջոցների նկատմամբ, որոնք թողարկվել են 2023 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:

*Ավելի մանրամասն տե՛ս 11-րդ թողարկմամբ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀՀ զբոսաշրջության զարգացման 2026-2030 թվականների ռազմավարական ծրագիրը և ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին (N 30-Լ, ընդունված՝ 08.01.2026թ., ուժի մեջ՝ 10.01.2026թ.)

- Ծրագրով նախատեսվում են զբոսաշրջության ոլորտի զարգացման տեսլականից ու ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից բխող ոլորտի զարգացման գերակայությունները, վերջիններիս հասնելու արդյունավետ ճանապարհը, ինչպես նաև առկա մարտահրավերներին արձագանքելու ուղիները:
- ՀՀ-ում զբոսաշրջությունը, ունենալով ռազմավարական նշանակություն, հանդիսանում է առանցքային տարր տնտեսության ձևավորման մեջ, ուստի ծրագրով առանձնացվում են այն հիմնախնդիրները, որոնք անհրաժեշտ է լուծել նոր ռազմավարությամբ: Վերլուծելով նախորդ տարիների զբոսաշրջության վիճակագրությունը՝ առանձնացվում են 3 հիմնական զարգացման տեսակներ՝ մշակութային, գաստրո և արկածային: Ծրագրից անմասն չեն մնում նաև բժկական և առողջարանային, գյուղական, կրոնական և ՄԱՅՍ զբոսաշրջության տեսակները, որոնք ևս ենթակա են զարգացման:

ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 17-Ն, ընդունված՝ 08.01.2026թ., ուժի մեջ՝ 09.07.2026թ.)

- Որոշմամբ նախատեսվում է սահմանել, որ վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման գործընթացը պետք է իրականացվի բացառապես էլեկտրոնային եղանակով, նոր ստեղծված՝ «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակ» էլեկտրոնային համակարգի (էլեկտրոնային հարթակի) համապատասխան բաժնի միջոցով:

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի N 2291-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 28-Ն, ընդունված՝ 08.01.2026թ., ուժի մեջ՝ 09.07.2026թ.)

- Որոշմամբ նախատեսվում է սահմանել, որ թափոնների տեղադրման և պահման սահմանաքանակների նախագծերի հաստատման գործընթացը պետք է իրականացվի բացառապես էլեկտրոնային եղանակով, այդ նպատակով ստեղծվող՝ «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակ» էլեկտրոնային համակարգի համապատասխան բաժնի միջոցով:

ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի N 14-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 22-Ն, ընդունված՝ 08.01.2026թ., ուժի մեջ՝ 20.01.2026թ.)

- Որոշմամբ հստակեցվել է ինքնակամ կառույցների հաշվառման ընթացակարգը, մասնավորապես՝ առցանց չափագրման գրասենյակ հաշվառման փաթեթի ներբեռնման և Կադաստրի կոմիտեի կողմից դրա հաստատման պահից ինքնակամ շինությունը հաշվառված լինելու հանգամանքը, որով ապահովվել է հաշվառման ընթացակարգի իրավական հստակ ավարտը և պատվիրատուի՝ համապատասխան ինքնակամ կառույցի հաշվառումն հաստատելու կամ մերժելու մասին իրազեկվածությունը:
- Որոշմամբ Կադաստրի կոմիտեին վերապահվում է ինքնակամ շինությունների հաշվառման ներկայացման դեպքում՝ ինքնակամ շինության հաշվառումը հաստատելու կամ մերժելու լիազորություն, ինչպես նաև սահմանվում են պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա առկա ինքնակամ շինությունների հաշվառման վարույթի առանձնահատկությունները:

Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ վերափոխման դոկտրինը հաստատելու մասին (N 16-Լ, ընդունված՝ 08.01.2026թ., ուժի մեջ՝ 10.01.2026թ.)

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն վերջին տարիներին գտնվում է տնտեսական, ինստիտուցիոնալ և անվտանգային վերափոխումների փուլում, սույն ՀՀ կառավարության որոշմամբ առաջարկվում է սահմանել «Իրական Հայաստանի» տնտեսական և գաղափարական հիմքերը՝ ամրագրելով պետության դերը որպես մարդակենտրոն, բայց միաժամանակ անվտանգությանը, դիմակայունությանը և ինստիտուցիոնալ ամրապնդմանը ծառայող համակարգի:
- Որոշմամբ առաջարկվում է վերացնել տնտեսական և ինստիտուցիոնալ քաղաքականության հատվածայնությունը, ամրագրել երկարաժամկետ տեսլական և հստակ սկզբունքներ, սահմանել ծրագրերի միասնական կառուցվածքային համակարգ:

Աշխատանքային օրը տեղափոխելու մասին (N 109-Ն, ընդունված՝ 29.01.2026թ., ուժի մեջ՝ 30.01.2026թ.)

- Որոշմամբ 2026 թվականի մայիսի 4-ը (երկուշաբթի) դարձվում է ոչ աշխատանքային օր, իսկ այն լրացնելու համար աշխատանքային է սահմանվում 2026 թվականի ապրիլի 18-ը (շաբաթ):

ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի N 1284-Լ որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին (N 36-Լ, ընդունված՝ 15.01.2026թ., ուժի մեջ՝ 16.01.2026թ.)

- Որոշմամբ առաջարկվում է երիտասարդ տնտեսավարողների (18–35 տարեկան) և 63 տարեկանը լրացած ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումը ավելացնել 1 տոկոսային կետով: Մասնավորապես՝ մինչև 3 մլրդ դրամ վարկերի դեպքում սուբսիդավորումը կկազմի 9%, 3–9 մլրդ դրամի դեպքում՝ 8%, իսկ 9–15 մլրդ դրամի դեպքում՝ 7%:
- Գյուղատնտեսության ոլորտում սուբսիդավորումը կկիրառվի նաև այն առևտրային իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք ունեն մեկ հիմնադիր և տնօրեն, որի տարիքը համապատասխանում է սահմանված չափանիշներին, և որոնք վարկի գործողության ընթացքում չեն փոխի սեփականատիրական կառուցվածքը:

Շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 274-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (N 59-Ն, ընդունված՝ 15.01.2026թ., ուժի մեջ՝ 17.01.2026թ.)

- Սույն կարգը սահմանում է միջինից բարձր, բարձր և բարձրագույն ռիսկայնության նորակառույց և գոյություն ունեցող շենքերի ու շինությունների, այդ թվում՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների անձնագրավորման կարգը: Այն կիրառվում է քաղաքաշինական գործունեության բոլոր սուբյեկտների նկատմամբ, որոնք ներգրավված են շենքերի նախագծման, կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման կամ վերականգնման գործընթացներում:
- Շենքերի և շինությունների անձնագրավորումն իրականացվում է ՀՀ օրենսդրության և քաղաքաշինության կոմիտեի կողմից հաստատված մեթոդաբանության հիման վրա՝ շենքերի անվտանգ շահագործման, տեխնիկական վիճակի գնահատման և համապատասխան տեղեկատվության հասանելիության ապահովման նպատակով:
- Անձնագրավորման գործընթացը նախաձեռնվում է կառուցապատողի կամ շենքի կառավարման մարմնի կողմից և իրականացվում է քաղաքաշինության ոլորտում լիցենզիա ունեցող կազմակերպության հետ պայմանագրի հիման վրա: Բազմաբնակարան շենքերի դեպքում գործընթացի պատասխանատուն շենքի կառավարման մարմինն է:
- Անձնագրերը նպատակահարմար է կազմել առնվազն 10 տարին մեկ, ինչպես նաև շենքերի վերակառուցման, հիմնանորոգման կամ նշանակության փոփոխության դեպքերում:

- Պետական, համայնքային և ծրագրային միջոցներով իրականացվող շինարարության դեպքում անձնագրավորման ծախսերը ներառվում են ծրագրերի նախահաշվային արժեքում, իսկ գոյություն ունեցող շենքերի դեպքում՝ դիտարկվում են որպես շահագործման և պահպանման ծախսեր:
- Անձնագրերը կազմվում են լիցենզավորված կազմակերպությունների կողմից, իսկ դրանց տվյալները հիմք են հանդիսանում շենքերի հետագա շահագործման, վերանորոգման և արդիականացման նախագծային լուծումների մշակման համար:

ՀՀ 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (N 62-Ն, ընդունված՝ 22.01.2026թ., ուժի մեջ՝ 23.01.2026թ.)

- ARCA համակարգով անկանխիկ վճարումներից հետվճարի տրամադրման ծրագրի կիրարկման լույսի ներքո, տվյալ որոշմամբ առաջարկվում է «1242. Հայկական վճարահաշվային համակարգի լավարկում» ծրագրի «12001. Arca ազգային վճարահաշվային համակարգով անկանխիկ վճարումներից հետվճարի տրամադրում» միջոցառման կատարող Հայաստանի Հանրապետության պետական եկամտների կոմիտեի փոխարեն սահմանելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1485-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 81-Լ, ընդունված՝ 22.01.2026թ., ուժի մեջ՝ 23.01.2026թ.)

- Որոշման նպատակն է 2026թ. գյուղատնտեսական տարվա համար գյուղատնտեսական ապահովագրության փորձնական ծրագրի իրականացումը և դրա շրջանակում աջակցություն տրամադրելը թե՛ տնտեսավարողներին, թե՛ ապահովագրական ընկերություններին:
- 2026թ. առաջարկվում է ապահովագրավճարների սուբսիդավորումն ամբողջությամբ իրականացնել պետության միջոցներով՝ տնտեսավարողներին տրամադրելով ապահովագրավճարի սուբսիդավորում՝ ծիրանի համար՝ 40%, այլ մշակաբույսերի համար՝ 60%:
- Ապահովագրական ընկերությունների մասնակցությունը խթանելու նպատակով պետությունը կփոխհատուցի ապահովագրական հատուցումների և վնասների գնահատման ծախսերի այն մասը, որը կգերազանցի հավաքագրված ապահովագրավճարների 80%-ը: Վնասների գնահատման ծախսերի առավելագույն չափը կսահմանի գործակալության խորհուրդը: Ապահովագրական ընկերությունները փոխհատուցման համար կարող են դիմել ամսական հաշվետվությունների ամփոփումից հետո:

ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 16-ի N 274-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (N 60-Ն, ընդունված՝ 15.01.2026թ., ուժի մեջ՝ 26.01.2026թ.)

- Որոշմամբ վերանայվում և համալրվում է քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության աշխատանքների որակի հսկողության ազգային ծրագիրը՝ նպատակ ունենալով բարձրացնել վերահսկողության արդյունավետությունն ու այն համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին: Փոփոխություններով հստակեցվում են ծրագրի խնդիրներն ու նպատակները՝ ընդգծելով ավիացիոն անվտանգության պահանջների կատարման վերահսկողությունը, դրանց արդյունավետության գնահատումը և կիրառվող միջոցառումների շարունակական իրականացումը:
- Սահմանվում են որակի հսկողության հիմնական ձևերը՝ աուդիտ, տեսչական ստուգում, ուսումնասիրություն, դիտարկում, փորձարկում և միջադեպերի հետաքննություն, ինչպես նաև դրանց իրականացման ռիսկահեն մոտեցումը՝ ներառելով պլանավորված և չպլանավորված միջոցառումներ: Միաժամանակ ամրագրվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի դերը որպես լիազոր մարմին՝ ընդլայնելով նրա վերահսկողական և համակարգող լիազորությունները:

- Փոփոխություններով հստակեցվում են ավիացիոն անվտանգության տեսուչների ընտրության, ուսուցման, սերտիֆիկացման կարգը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև վերահսկվող կազմակերպությունների պարտականությունները՝ ներքին որակի հսկողության ծրագրերի մշակման, անհամապատասխանությունների վերացման և տեսչական հանձնարարականների կատարման ուղղությամբ: Առանձնահատուկ կարգավորումներ են սահմանվում մեծ ուղևորահոսք ունեցող օդանավակայանների համար՝ ապահովելով ստուգումների և փորձարկումների նվազագույն հաճախականություն:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

«Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրի լրացումը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին (N 12-Ա, ընդունված՝ 08.01.2026թ., ուժի մեջ՝ 09.01.2026թ.)

- Լրացմամբ ավտոմատ փոխանակման ենթակա լրացուցիչ տեղեկատվությունը ներառում է հաշվետիրոջ կողմից վավեր ինքնահայտարարագրի ներկայացման փաստը, վերահսկող անձի կարգավիճակի հիմքերը և ինքնահայտարարագրի առկայությունը, հաշվետու հաշվի տեսակը (նախկին կամ նոր, համատեղ հաշիվ լինելու հանգամանքը և համատեղ հաշվետերերի քանակը), ինչպես նաև ներդրումային կազմակերպության կապիտալում բաժնային մասնակցության տնօրինման կարգավիճակը:
- Լրացման կիրառումը կախված է իրավասու մարմինների կողմից ներպետական օրենսդրության համապատասխանեցման վերաբերյալ պաշտոնական ծանուցումների ներկայացումից և գործընկեր երկրների ցանկի համաձայնեցումից: Անցումային ժամանակահատվածում տեղեկությունների ավտոմատ փոխանակումը կիրականացվի նախկին Ստանդարտի պահանջներով և արդեն համաձայնեցված գործընկերների հետ:

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 24-Ա, ընդունված՝ 15.01.2026թ., ուժի մեջ՝ 16.01.2026թ.)

- Նախագծով առաջարկվում է պետական տուրքի նոր տեսակների սահմանում որոնք կիրառվում են մշակութային արժեքների արտահանման գործընթացների իրականացման համար: Նախագծով մասնավորապես նախատեսվում է՝ մաքսային մարմինների կողմից մշակութային արժեքների համար գանձվող պետական տուրքի տարանջատում: Նախագծով նախատեսված փոփոխություններով կարգավորվում է կազմակերպությունների կամ անհատների կողմից մշակութային արժեքների արտահանման նպատակով պետական տուրքի վճարման գործընթացի կազմակերպումն է:

- Մշակութային արժեքների և հանքագիտության ու հնէաբանության հավաքածուների արտահանման, ժամանակավոր արտահանման, ինչպես նաև մաքսային տարածքից դուրս վերամշակման նպատակով արտահանման թույլատրող փաստաթղթերի տրամադրման համար պետական տուրքը սահմանվում է հետևյալ չափերով. մեկ մշակութային արժեքի դեպքում՝ բազային տուրքի տասնապատիկի չափով, իսկ երկու և ավելի մշակութային արժեքների դեպքում՝ բազային տուրքի տասնհինգապատիկի չափով:
- Նշված թույլատրող փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրման համար պետական տուրքը սահմանվում է բազային տուրքի եռապատիկի չափով:
- Սույն դրույթներով սահմանված պետական տուրքի դրույթաչափերը չեն ներառում համապատասխան ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված լրացուցիչ ծախսերը:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 85-Ա, ընդունված՝ 22.01.2026թ., ուժի մեջ՝ 23.01.2026թ.)

- Նախատեսվող փոփոխություններով առաջարկվում է որպես ավտոտրանսպորտային միջոց սահմանել նաև մոպեդները, տրիցիկլները և քվադրիցիկլները, ինչպես նաև համարվում է պարտադիր ապահովագրման ոչ ենթակա տրանսպորտային միջոցներից բխող պատասխանատվությունը: Մասնավորապես պարտադիր ապահովագրման ենթակա չի լինի այն ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը, որոնց շարժիչի առավելագույն ծավալը և զարգացած առավելագույն արագությունը կամ շարժիչի առավելագույն հզորությունը և զարգացած առավելագույն արագությունը չեն գերազանցում ՀՀ կառավարության սահմանած կարգով պետական գրանցման ենթակա լինելու համար նախատեսված սահմանաչափը:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 41-Ա, ընդունված՝ 15.01.2026թ., ուժի մեջ՝ 16.01.2026թ.)

- Սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենքով հստակեցվում և ընդլայնվում են հիմնական հասկացությունները, սահմանվում է ապրանքի պայմանագրին համապատասխանության նոր կարգավորում, այդ թվում՝ թվային տարր պարունակող ապրանքների դեպքում: Ամրագրվում են վաճառողի պարտականությունները թարմացումների, սխալ տեղադրման, երաշխիքների և տեղեկատվության տրամադրման մասով, ինչպես նաև սպառողի իրավունքները՝ ոչ պատշաճ որակի կամ անհամապատասխան ապրանքի դեպքում (վերանորոգում, փոխարինում, գնի իջեցում կամ պայմանագրի լուծում): Սահմանվում են անհամապատասխանության մասին տեղեկացման, ապացուցման և թերությունների վերացման հստակ ժամկետներ: Ընդլայնվում են հեռակա և ձեռնարկության շենքից դուրս կնքվող պայմանագրերի դեպքում սպառողի պաշտպանության երաշխիքները, ներառյալ՝ պայմանագրից 14-օրյա հրաժարվելու իրավունքը, առաքման ժամկետները և ռիսկերի բաշխումը:
- Գովազդի մասին օրենքով սահմանվում են մոլորեցնող և համեմատական գովազդի հստակ չափորոշիչներ, ուժեղացվում են անբարեխիղճ գովազդի դեմ երաշխիքները, և ամրագրվում է, որ գովազդում ներկայացված տվյալների ճշգրտության ապացուցման պարտականությունը կրում է գովազդատուն: Համեմատական գովազդը թույլատրվում է միայն օբյեկտիվ, սուուզելի և սպառողին չմոլորեցնող պայմաններում:
- Փոփոխությունների ընդհանուր նպատակն է ուժեղացնել սպառողների իրավունքների պաշտպանությունը, ապահովել բարեխիղճ մրցակցություն և ՀՀ օրենսդրությունը լիարժեք համապատասխանեցնել ԵՄ իրավական չափանիշներին:

«Տեխնիկական աջակցության տրամադրման մասին» պայմանագրի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին (N 63-Ա, ընդունված՝ 22.01.2026թ., ուժի մեջ՝ 23.01.2026թ.)

- «Տեխնիկական աջակցության տրամադրման մասին» պայմանագրի նախագծով նախատեսվում է իրականացնել ՀՀ ֆինանսների նախարարության և ներգրավված պետական մարմինների կարողությունների զարգացման համալիր ծրագիր, որն ուղղված է պետական և մասնավոր հատվածների գործընկերության ոլորտի կառավարման համակարգի ամրապնդմանը:

- Ծրագրի նպատակն է ամրապնդել ՊՄԳ ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունները, ապահովել կառավարման համակարգի արդյունավետությունը և բարձրացնել աշխատակիցների մասնագիտական հմտությունները՝ համահունչ միջազգային չափանիշներին և լավագույն փորձին:

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 66-Ա, ընդունված՝ 22.01.2026թ., ուժի մեջ՝ 23.01.2026թ.)

- Նախագծերի փաթեթով նախատեսվում են մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են ծանուցման կարգի արդիականացմանը, մասնավորապես՝ նախատեսվում է օրենսդրական ձևակերպումներից հեռացնել հրապարակային ծանուցման մամուլում հրապարակելու միջոցը՝ այն փոխարինելով կայքում տեղադրելու միջոցով: Տվյալ պարագայում կայքը azdarar.am հարթակն է:
- Նույն փոփոխությունները կատարվում են նաև առանձին իրավական ակտերի ծանուցումների վերաբերյալ դրույթներում, ինչպիսիք են՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Գրավատների և գրավատնային գործունեության մասին», «Սնանկության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքները, ՀՀ ջրային և հողային օրենսգրքերը և այլն:

«Օդային փոխադրումներ իրականացնողների և օդանավ շահագործողների համար ուղևորների, թռիչքային և սպասարկող անձնակազմի, ուղեբեռի, բեռի և երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրության նվազագույն պահանջների սահմանման մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 101-Ա, ընդունված՝ 29.01.2026թ., ուժի մեջ՝ 30.01.2026թ.)

- Նախագիծը սահմանում է պարտադիր ապահովագրության նվազագույն պահանջներ օդային փոխադրողների և օդանավ շահագործողների համար՝ ընդգրկելով ուղևորների, անձնակազմի, ուղեբեռի, բեռի և երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվությունը:
- Նախատեսում է, որ ապահովագրությունը պետք է գործի յուրաքանչյուր թռիչքի համար և ընդգրկի նաև բարձր ռիսկային իրավիճակներ, ինչպիսիք են ռազմական գործողությունները կամ ահաբեկչությունը: Վերահսկողությունը իրականացվելու է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից, իսկ խախտումների դեպքում կարող են կիրառվել լուրջ սահմանափակումներ՝ մինչև թռիչքների արգելում:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված նախագծերը ընդունվել են առաջին ընթերցմամբ:

«Բուսասանիտարիայի մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությունը և վաճառքը կդառնան օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ: Նախկինում դրանք համարվում էին ծանուցման ենթակա գործունեության տեսակներ: Նախատեսվող փոփոխությունների համաձայն՝ լիազոր մարմինն իրականացնելու է պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրության և վաճառքի լիցենզիայի պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն:
- Փոփոխություններ են նախատեսվում նաև բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծման ու ոչնչացման մասին կարգավորումներում: Մասնավորապես, վերջին շրջանում Հայաստանի Հանրապետությունից արտահանվող կարանտին բուսասանիտարական հսկողության ենթակա բեռների նկատմամբ սահմանային պետական վերահսկողություն իրականացնելու արդյունքում կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերումը խնդիրներ է առաջացնում հայկական ծագման բեռների անխափան արտահանման առումով: Նշված խնդրի լուծումներից մեկը արտահանումից առաջ դրանց նկատմամբ վարակազերծման իրականացումն է: Իսկ վարակազերծման համակարգի ստեղծման համար անհրաժեշտ են օրենսդրական լիազորությունների սահմանումներ, համապատասխան ընթացակարգերի մշակում, վարակազերծման մեթոդներին ներկայացվող ընդհանուր պահանջների սահմանում, որոնց էլ ուղղված են նախատեսվող փոփոխությունները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծի նպատակն է կարգավորել որոշակի հուշարձանների, մասնավորապես, պաշտամունքային կառույցների՝ այլ սուբյեկտների օտարման իրավահարաբերությունները:

- Առաջարկվում է, որ հիշյալ կառույցները գտնվեն համապատասխան կրոնական կազմակերպությունների ներքո, իսկ օտարման դեպքում ապահովվի կառավարության հնարավորությունը համաձայնություն տալու կամ մերժելու գույքային իրավունքները հատուցմամբ կամ անհատույց փոխանցելու վերաբերյալ գործարքը:
- Որպես կարգավորում՝ նախատեսվել է Հայաստանի Հանրապետության իրավունքը՝ համաձայնություն տալու կամ մերժելու գույքային իրավունքները հատուցմամբ կամ անհատույց փոխանցելու գործարքի վերաբերյալ:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ ՀՀ Կադաստրի կոմիտեում այլևս չեն գործելու սպասարկման գրասենյակներ, փոխարենը՝ գործելու են նոր ստեղծված խորհրդատվական կենտրոններ: Հետևաբար, նախատեսվում է համապատասխան հոդվածներում կատարել փոփոխություններ՝ «սպասարկման գրասենյակ» բառերը փոխարինելով «խորհրդատվական կենտրոն» բառերով, ինչպես նաև հասկացությունների շարքում ներառել «խորհրդատվական կենտրոն» հասկացությունը:

«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է ստեղծել սպորտի կառավարման տեղեկատվական համակարգ՝ սպորտային գործունեության կառավարման, կազմակերպման, վերլուծության և տվյալների պահպանման նպատակով: Այն կապահովի տվյալների ավտոմատացված հավաքագրումը, մշակումը, պահպանումը:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է նախատեսել դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություններ ընտանեկան բռնության ենթարկված այն անձանց համար, ովքեր դիմել են ամուսնալուծության, հայրության որոշման վերաբերյալ հարցերով, ինչպես նաև այլ օրենքով սահմանված դեպքերում:

ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Օրենսգրքում առաջարկվող փոփոխություններն են.
- 1. Պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում շահութահարկ վճարողներին որպես արդեն իսկ կատարված ծախսերի փոխհատուցում տրամադրված նպատակային դրամական միջոցների գծով եկամտի որոշման առանձնահատուկ կանոնների վերանայում: Ընդհանուր կանոնին համապատասխան՝ անհատուց ստացված դրամական միջոցները եկամուտ են համարվում դրանց ստացման հարկային տարում, իսկ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ստացված դրամական միջոցների մասով ներկայումս սահմանված են առանձնահատուկ կարգավորումներ: Մասնավորապես՝ որպես արդեն իսկ կատարված ծախսերի կամ ստացված վնասների փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում դրանց ստացման հարկային տարում, բացառությամբ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի, որոնց շրջանակներում որպես արդեն իսկ կատարված ծախսերի փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում այն հարկային տարում, երբ ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ՝ անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից: Առաջարկվում է սահմանել, որ անկախ գործունեության իրականացման ոլորտից, պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում շահութահարկ վճարողների կողմից որպես ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվների գծով արդեն իսկ կատարված ծախսերի փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում այն հարկային տարում, երբ ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ՝ անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից:
- 2. Մինչև 2026թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները ազատվում են շահութահարկի վճարումից իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի և այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10%-ը:

- նկատի ունենալով այն հանգամանքը, որ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում գյուղատնտեսության ոլորտի տնտեսավարող սուբյեկտների կողմից ներգրավված վարկերի (լիզինգի) գումարները և դրանց գծով հաշվարկվող տոկոսագումարները պետության կողմից սուբսիդավորվելու դեպքում հանդիսանում են եկամուտ և համախառն եկամտի 10%-ը գերազանցելու դեպքում առաջացնում են շահութահարկի անհարկի պարտավորություններ, նախագծով առաջարկվում է սահմանել, որ շահութահարկ վճարողների համար եկամուտ չեն համարվում պետության կողմից ֆինանսավորվող՝ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ստացված՝ վարկերի (լիզինգի) և դրանց գծով հաշվարկվող տոկոսադրույքների սուբսիդավորման գումարները, որոնք միաժամանակ և ծախս չեն համարվելու:
- նախատեսվում է, որ վերոնշյալ փոփոխությունների կիրառությունը տարածվելու է 2024թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա խնդիրը նկատվել է հատկապես 2024 թվականից սկսած: Միաժամանակ, 09.02.2026թ. Կառավարությունը նախագծի 2-րդ ընթերցմամբ ընդունվելու համար ներկայացրել է առաջարկ՝ փոփոխությունների կիրառությունը տարածել 2022թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ:

Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Սույն փոփոխությունը կատարվում է 2024 թվականի հունվարի 16-ի ՀՕ-23-Ն օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու և բարեհաջող իրականացվելու լույսի ներքո, որով առաջարկվում էր օրենքի խախտմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած և համապատասխանաբար 27 կամ 35 տարին լրանալուց հետո սույն օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության և պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տասնհինգ միլիոն ՀՀ դրամ: Առաջարկվում է տվյալ արտոնությունը սահմանել նաև օրենքի ընդունումից հետո 27 տարին լրացած անձինք նույնպես կարողանան օգտվել այս օրենքից:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- 2019 թվականի դեկտեմբերի 9-ին «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-258-Ն օրենքի ընդունմամբ օրենքի 29-րդ հոդվածում կատարվեց լրացում, համաձայն որի՝ օդային տրանսպորտով մեկնող այն ֆիզիկական անձինք, որոնք առևտրային ավիափոխադրումներ իրականացնող ավիաընկերությունների միջոցով մեկնում են առաջին թռիչքի մեկնարկի պահին նախորդող վերջին 12 ամիսներին չսպասարկված IATA կողմ օդանավակայաններ օգտվում են օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով սահմանված օդային ուղևորների ելքի համար սահմանված պետական տուրքի վճարումից ազատվելու արտոնությունից: Օրենքի փոփոխություններով պայմանավորված արտոնությունները սկսեցին կիրառվել նոր ուղղություններով մեկնող ֆիզիկական անձանց համար 2020թ. հունվարից՝ Կառավարության որոշմամբ՝ 3 տարի ժամկետով +2 տարի երկարաձգման հնարավորությամբ: Նշված արտոնությունների ժամկետները 2025թ.-ից սկսած ավարտվում են, ինչը բացասական ազդեցություն ունի տվյալ ուղղություններով հիմնականում բյուջետային ավիաընկերությունների կողմից իրականացվող չվերթերի իրականացման վրա: Ուղևորահոսքի աճի բարձր տեմպը պահելու, և արդեն իսկ հաստատված նոր ուղղություններով չվերթերի հաճախականությունների բարձր մակարդակը ապահովելու նպատակով առաջարկվում է օրենքով նախատեսված օդային ուղևորների ելքի համար սահմանված պետական տուրքի վճարումից ազատվելու արտոնության տրամադրման ժամկետի երկարաձգումը իրականացնել մինչև երկու անգամ ներառյալ՝ ամեն անգամ 24 ամիս ժամկետով՝ ապահովվելով երկարաձգման համար անհրաժեշտ պահանջների կատարումը:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է վերանայել դատավորների, դատախազների, քննիչների թեկնածուների ընտրության, նշանակման և առաջխաղացման գործընթացները, նախատեսել մասնավորապես բարեվարքության վերաբերյալ եզրակացությանն առնչվող նոր կարգավորումներ:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծի ընդունմամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու նոր համակարգ կձևավորվի:

- Դրա միջոցով տարկետում կտրամադրվի աշխարհի լավագույն բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական վարկանիշավորման Academic Ranking of World Universities ցանկի առաջին հինգ տասնյակում ընդգրկված հաստատություններում բակալավրի (դիպլոմավորված մասնագետի)՝ մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և այլ կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ սովորելու և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշված ոլորտում և վայրում աշխատելու համար:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը բարձրացվում են 3 ձայնով, հստակեցվում են հանձնաժողովի գործունեությանն ու գործառույթներին վերաբերող կարգավորումները:
- Սահմանափակվում է Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների դատավոր չհանդիսացող անդամի կողմից ՀՀ ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում դատական ներկայացուցչություն իրականացումը:
- Օրենքով սահմանված կարգով գրանցված և որոշակի ոլորտներում գործունեություն ծավալող ոչ առևտրային կազմակերպությունները հնարավորություն կունենան առաջադրելու Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովի ոչ դատավոր անդամի թեկնածուներ:
- Դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող հավակնորդներին և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված՝ վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող հավակնորդները կներառվեն ավելի վաղ հերթում:
- Սահմանվում է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուների կողմից իրենց ընտրությունից առաջ Դատական դեպարտամենտ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ ներկայացնելու, ինչպես նաև ընտրվելու դեպքում՝ ըստ պահանջի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու պահանջներ:

«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է սահմանել հետևյալը՝
 1. եթե գնման գործընթացի հրավերը պարունակել է տեղեկություն գործընթացը հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերի ապահովման նպատակով կազմակերպված լինելու մասին, ապա գնման գործընթացի շրջանակներում պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկումը չի կասեցնում գնման գործընթացը: Ընդ որում, տեղեկությունը հրավերում կարող է ներառվել Կառավարության նախնական համաձայնության դեպքում:
 2. պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտերի կատարումը չի կարող կասեցվել այդ ակտերի դեմ բերված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հիմքով:
 3. գնումների հետ կապված վեճերով կայացված վճիռների դեմ բերված բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումների, բացառությամբ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին, ինչպես նաև վերաքննիչ բողոքից հրաժարվելու հիմքով վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումների, դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այդ ակտերի հրապարակման պահից տասնհինգօրյա ժամկետում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքների քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով:
- Սահմանվում է, որ եթե կողմի միջնորդությամբ մինչև վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացնելու վերջնաժամկետի ավարտից հետո 1-ամսյա ժամկետում, իսկ դատարանի սեփական նախաձեռնությամբ բողոքի քննության ցանկացած փուլում՝ դատարանը գա եզրահանգման, որ վերաքննիչ բողոքի քննության արդյունավետության նպատակով այն անհրաժեշտ է իրականացնել դատական նիստում, ապա որոշում է կայացնում վերաքննիչ բողոքի քննությունը դատական նիստում անցկացնելու մասին, ծանուցելով այդ մասին դատավարության մասնակիցներին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Կահմանվի դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը՝ որպես վարչական դատավարության սկզբունք: Որոշ փոփոխություններ են նախատեսվում նաև հայցադիմումը վերադարձնելու և կրկին ներկայացնելու կարգավորումներում: Օրինակ նշվել է, որ կրկին ներկայացվող հայցադիմումին կցվում է դիմում՝ վարչական դատարանի կողմից արձանագրված առերևույթ սխալները վերացված լինելու և այն կրկին ներկայացնելու մասին, իսկ դիմում չներկայացվելու դեպքում հայցադիմումը մուտքագրվում է ընդհանուր կանոններով՝ որպես նոր գործ:
- Փոփոխություններ են նախատեսվել նաև վարչական դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող գործերի միացման վարույթի վերաբերյալ կարգավորումներում:

«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծերի փաթեթով առաջարկվում է՝
 1. Օրենքով նախատեսել հանրության գերակա շահ ճանաչելու վերաբերյալ Կառավարության որոշումների հիմնավորվածության բարձրացմանն ուղղված կարգավորումներ՝ ի թիվս այլնի, սահմանելով հանրության գերակա շահ ճանաչելու որոշումների կայացման մեթոդաբանությունը և կատարելագործելով որոշումների բովանդակությանն առաջադրվող պահանջները:
 2. Օտարվող գույքերի սեփականատերերի համար նախատեսել ձեռքբերողի կողմից առաջարկվող փոխհատուցման չափին համաձայնելու համար խրախուսական գործիքակազմ՝ սահմանելով գործող կարգավորման համեմատությամբ ևս 15 տոկոս ավելի բարձր չափով փոխհատուցում ստանալու հնարավորություն (փաստացի՝ շուկայական արժեքից 30 տոկոս ավել):
 3. Սեփականատերերի և գույքային իրավունքներ ունեցող այլ անձանց համար երաշխավորել սեփականության գնահատման գործընթացում առավել մրցակցային հնարավորություններ՝ հնարավորություն տալով սեփականության գնահատումից հետո 1-ամսյա ժամկետում ներկայացնել գնահատման նոր հաշվետվություն, որով գույքի գնահատված շուկայական արժեքը սկզբնական գնահատումից ավելի բարձր լինելու դեպքում սեփականատիրոջ համար կապահովվի սկզբնական գնահատմամբ արձանագրված շուկայական արժեքից մինչև 10 տոկոս ավելի բարձր փոխհատուցում:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Փոփոխություններով կանոնակարգվում են էլեկտրոնային առևտրի շրջանակներում ԵՏՄ անդամ պետություններից ԵՏՄ առևտրի էլեկտրոնային հարթակների միջոցով ֆիզիկական անձանց կողմից ձեռք բերված ապրանքների ԱԱՀ-ով հարկման հետ կապված հարցերը: Մասնավորապես,
 1. ապրանքների էլեկտրոնային առևտուր է համարվում ԵՏՄ անդամ այլ պետության կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից առևտրի էլեկտրոնային հարթակի միջոցով (հայկական կամ ԵՏՄ անդամ այլ պետության) ապրանքների մատակարարումը ՀՀ տարածքում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին,
 2. առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող է համարվում ԵՏՄ անդամ պետության կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը (այդ թվում՝ ապրանքի սեփականատեր հանդիսացող), որի առևտրի էլեկտրոնային հարթակի միջոցով իրականացվում և (կամ) կազմակերպվում է ապրանքների էլեկտրոնային առևտուր,
 3. ապրանքի մատակարարման վայրը համարվելու է ՀՀ-ն, եթե ֆիզիկական անձանց վաճառված ապրանքները փոխադրման (փոխանցման) ավարտի պահին գտնվում են ՀՀ տարածքում,
 4. արտարժույթով արտահայտված գործարքների մասով հարթակը շահագործողի կողմից հարկման բազան և եկամուտը որոշվելու են ապրանքի մատակարարման պահը համարվող օրվա դրությամբ՝ ելնելով այդ օրը ԿԲ հրապարակած միջին փոխարժեքից,
 5. հարթակը շահագործողի կողմից ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման նպատակով ապրանքի մատակարարման պահ է համարվելու ֆիզիկական անձանց կողմից ապրանքի դիմաց վճարում կատարելու օրը ներառող ամսվա վերջին օրը (ներկայումս սահմանված է այդ օրը ներառող եռամսյակի վերջին օրը),
 6. ֆիզիկական անձին մատակարարված ապրանքի վերադարձի կամ վճարված ապրանքից հրաժարվելու դեպքում հարթակը շահագործողը գործարքի ճշգրտման արդյունքներն ԱԱՀ-ի մասով արտացոլելու է այն հաշվետու ժամանակաշրջանի հաշվարկում, որում ամբողջությամբ կամ մասնակի վերադարձվել է ապրանքի դիմաց վճարված գումարը:

- Նաև, ՀՀ տնտեսավարող սուբյեկտների կողմից ԵՏՄ առևտրի էլեկտրոնային հարթակներով ԵՏՄ անդամ այլ պետությունում գտնվող ֆիզիկական անձանց ապրանքների մատակարարման գործարքները համարվելու են ԱԱՀ-ի 0% դրույքաչափով հարկվող գործարքներ, որի կիրառությունը հիմնավորվելու է հարթակը շահագործողի կողմից հարկային մարմին ներկայացված տեղեկատվությամբ: Հարթակը շահագործողի կողմից հարկային մարմին ներկայացվող տեղեկատվության շրջանակը, տեղեկատվության հասանելիության և ներկայացման կարգը սահմանելու է Կառավարությունը:
- ԵՏՄ առևտրի էլեկտրոնային հարթակների միջոցով ԵՏՄ անդամ այլ պետության կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից ֆիզիկական անձանց ապրանքների մատակարարման գործարքների մասով ԱԱՀ-ը հաշվարկելու և վճարելու է առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործողը: ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվելու յուրաքանչյուր հաշվետու ամիսը, իսկ ԱԱՀ-ի գումարները պետական բյուջե են վճարվելու մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: ԵՏՄ անդամ այլ պետության առևտրի էլեկտրոնային հարթակներ շահագործողները ԱԱՀ-ն հաշվարկելու և վճարելու են E-Vat համակարգով, իսկ ՀՀ հարթակներ շահագործողները՝ այդ տեղեկատվությունը ներկայացնելու են ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով:
- ՀՀ տնտեսավարողների կողմից ԵՏՄ առևտրի էլեկտրոնային հարթակով ՀՀ-ում գտնվող ֆիզիկական անձանց մատակարարվող ապրանքների մասով, եթե մատակարարվող այդ ապրանքները ներմուծվում են ԵՏՄ անդամ այլ պետության տարածքից, տնտեսավարող սուբյեկտները պետք է վճարեն ԵՏՄ-ից ներմուծվող ապրանքների մասով ներմուծման ԱԱՀ: Ներմուծման ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրելու է ՀՀ տնտեսավարողը՝ մինչև ապրանքը ֆիզիկական անձին հանձնելու օրը ներառող ամսվա հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, այդ ժամկետում մերկայացնելով նաև ներմուծման հարկային հայտարարագիր՝ տվյալ ամսում ֆիզիկական անձանց հանձնված ապրանքների մասով,
- Առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործողները չեն կարող գործել հարկման հատուկ համակարգերում:
- Փոփոխություններն ուժի մեջ կմտնեն օրենքի դրույթների կիրարկումն ապահովող ծրագրային ապահովման աշխատանքներն ավարտելու օրվան հաջորդող 10-երորդ օրը, իսկ համապատասխան ենթաօրենսդրական ակտերը կընդունվեն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Ստորև ներկայացված նախագծերն ընդունվել են երկրորդ ընթացքում և ամբողջությամբ:

Կլիմայի մասին օրենք և այլ հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Օրենքի հիմնական նպատակներն են ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված գործողությունների պլանավորման և իրականացման համար՝ համաձայն հայաստանի հանրապետության միջազգային պարտավորությունների և հանձնառությունների ապահովումը և կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանավորման և իրականացման համար բնակչության, տնտեսության և ենթակառուցվածքների պաշտպանությունը:
- Նաև, սահմանվում են կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում կառավարության, պետական կառավարման համակարգի այլ մարմինների, մարզպետի և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: Կազմավորվելու է նաև Կլիմայի փոփոխության հարցերով խորհուրդը: Նախատեսվում է նաև, որ կլիմայական ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցներից, միջազգային կազմակերպություններից, մասնավոր և այլընտրանքային ազգային կամ միջազգային աղբյուրներից ստացվող, ինչպես նաև հհ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներից: Թափանցիկության ընդլայնված շրջանակին ինտեգրվելու նպատակով կառավարությունը ապահովելու է նաև չափումների, հաշվետվողականության և հավաստագրման համակարգի գործարկումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է ռեաբիլիտացիայի իրական հնարավորություն այն անձանց համար, ովքեր օրենքով չնախատեսված լինելով հանդերձ ներգրավվել են քրեական գործընթացների մեջ՝ քրեական պատասխանատվությամբ համար նախատեսված տարիքային շեմին չհասնելու պայմաններում:
- Փոփոխություններ են նախատեսվում նաև խափանման միջոցի կիրառման վերաբերյալ վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու կառուցակարգերում:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է ներդնել կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգ մի շարք մարմիններում և կազմակերպություններում, օրինակ՝ հանրային իշխանության մարմիններում, առողջապահության, սոցիալական, շրջակա միջավայրի պահպանության, փորձագիտության, կառուցապատման կամ ներդրումային ծրագրերի ապահովման բնագավառներում գործունեություն իրականացնող կամ վերջին երեք տարվա ընթացքում պետական բյուջեից սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստացած պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, հիսուն տոկոս և ավելի պետական կամ համայնքի կամ պետական ու համայնքի բաժնեմասեր ունեցող ընկերություններում:

«Գնահատման գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախատեսվում է սահմանել իրավունքեր, պարտականություններ և սահմանափակումներ ինչպես օրենքի իմաստով ծառայություններ մատուցողների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության որակավորված գնահատողների և գնահատման կազմակերպությունների համար: Նաև, կատարվում են փոփոխություններ հաշվառման ծրագրի կիրառման կարգում, սահմանվում են նոր իրավասություններ Կադաստրի կոմիտեի համար՝ որպես գնահատման գործունեության ոլորտը կարգավորող, վերահսկող և որակավորում իրականացնող լիազոր մարմնի:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Փոփոխությունների ընդունման նպատակը պետական սահմանի ցամաքային անցման կետերում տրանսպորտային միջոցների մուտքի ժամանակ հարկերի ու վճարների գանձման արդյունքում առաջացող կուտակումների նվազեցումն է և որոշակի դեպքերի համար ճանապարհային հարկի արտոնություն սահմանելն է: Ըստ էության, բնապահպանական հարկի, ճանապարհային հարկի, պետական տուրքի վճարումը պետական սահմանի անցման կետերում կատարելու պահանջը դեպի երկրի ներս տեղափոխելու արդյունքում դրանց վճարելու հնարավորությունն ավելի դյուրին կլինի: Մասնավորապես, նախատեսվում է.
 - ՀՀ պետական սահմանի ցամաքային անցման կետերում վճարվող բնապահպանական հարկի, ճանապարհային հարկի և պետական տուրքի վճարումների հետաձգում՝
 1. բնապահպանականի հարկի վճարման ժամկետ սահմանել մինչև ավտոտրանսպորտային միջոցների մուտք գործելու օրվան հաջորդող 15-րդ օրը ներառյալ, իսկ մինչև նշված ժամկետը ելքի դեպքում՝ մինչև ելքը,
 2. ճանապարհային հարկի վճարման ժամկետ սահմանել մինչև ավտոտրանսպորտային միջոցների ՀՀ մուտք գործելու օրվան հաջորդող 15-րդ օրը ներառյալ, իսկ մինչև նշված ժամկետը ՀՀ տարածքից ելքի դեպքում՝ մինչև ելքը,
 3. ՀՀ տարածքում տասնհինգ օրից ավելի գտնվելու դեպքում յուրաքանչյուր հաջորդ տասնհինգ օրվա կամ ավելի պակաս ժամկետի համար ճանապարհային հարկի վճարման ժամկետ սահմանել մինչև ՀՀ տարածքում գտնվելու 15-օրյա ժամկետը լրանալու օրվան հաջորդող 5-րդ օրը, իսկ մինչև նշված ժամկետը ելքի դեպքում՝ մինչև ելքը:
 4. ավտոտրանսպորտային միջոցների ելքի ժամանակ հաշվարկված բնապահպանական և ճանապարհային հարկի գումարից պակաս վճարումների դեպքում մաքսային մարմինները պակաս վճարված հարկի գումարը և հարկի վճարումն ուղացնելու համար օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի գումարները գանձում են ավտոտրանսպորտային միջոցների ելքի ժամանակ:
 5. մաքսային մարմինները կատարում են բնապահպանական և ճանապարհային հարկի պարտավորությունների հաշվառում՝ վճարումների անդորրագրերը հետագայում կրկին որպես ճանապարհային հարկի վճարումը հավաստող փաստաթուղթ չօգտագործվելու համար:

- «Պետական տուրքի մասին» օրենքի 19.9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված է պետական տուրք՝ ժամանման վայրի մաքսային մարմնից մինչև ներքին մաքսային մարմին մեկ տարանցման հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար՝ անկախ քաշից և միաժամանակ նույն մասի 5-րդ կետով սահմանված է պետական տուրք՝ մեկ ապրանքային հայտարարագրով հայտարարագրվող ապրանքների բացթողմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման համար: Գործնականում 4-րդ կետով սահմանված պետական տուրքը վճարվում է անցման կետերում, իսկ 5-րդ կետով սահմանված պետական տուրքը՝ ապրանքների հայտարարագրի ներկայացնելուց հետո: Կատարվող փոփոխությամբ ուժը կորցրած է ճանաչվում 4-րդ կետը և համապատասխան փոփոխության ենթարկվում մյուս դրույքաչափերը:
 - ՀՀ-ում չգրանցված (չհաշվառված)՝ ՀՀ մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական հարկի դրույքաչափերը սահմանվում են միասնական՝ նկատի ունենալով այն, որ նորմաների սահմաններից ավելի արտանետումների համար առկա են համապատասխան օրենսդրական կարգավորումներ, այդ թվում՝ նախատեսված է վարչական պատասխանատվություն, և բացի այդ պետական սահմանի անցման կետերում չափումների իրականացում հնարավոր չէ:
 - ՀՀ-ում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների ՀՀ տարածքից ելքը ճանապարհի անանցանելիությամբ պայմանավորված անհնար լինելու դեպքում ճանապարհային հարկ վճարողներն ազատվում են համապատասխան ժամանակահատվածի համար հաշվարկման ենթակա ճանապարհային հարկից: Արտոնությունից օգտվելու իրավունքը կհավաստվի լիազոր մարմնի կողմից տրվող տեղեկանքով:
 - Պետական տուրքի մասով փոփոխությունները ուժի մեջ կնտենն օրենքի պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա մեկից, իսկ բնապահպանական և ճանապարհային հարկի մասով փոփոխությունները կտարածվեն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ տարածք մուտք գործող տրանսպորտային միջոցների մասով:

«Օտարերկրացիների մասին» օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Փոփոխություններով նպատակադրվել է թվայնացնել օտարերկրացիներին կացության կարգավիճակների տրամադրման գործընթացը, կատարելագործել օտարերկրացիների հաշվառման վարչարարությունը, բարձրացնել դրա արդյունավետությունը, հստակեցնել կացության կարգավիճակների տեսակներն ու կացության կարգավիճակ տալու վարույթի իրականացման մեխանիզմները: Մասնավորապես՝
- հրաժարվել աշխատանքի թույլտվության, հետևաբար՝ նաև դրա բացառությունների համակարգից, փոխարենը որպես ժամանակավոր կացության կարգավիճակ տալու հիմք սահմանելով աշխատանքային վիզայի, աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով Հայաստանում գտնվելու (բնակվելու) թույլտվության առկայությունը, միաժամանակ սահմանելով առանց աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով ՀՀ-ում գտնվելու (բնակվելու) թույլտվության աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր կնքելու իրավունք ունեցող օտարերկրացիների շրջանակը,
- սահմանել աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով ՀՀ-ում գտնվելու (բնակվելու) թույլտվության հասկացությունը՝ նպատակ ունենալով իրականացնել Հայաստանում օրինական գտնվելու ժամկետում աշխատել ցանկացող օտարերկրացիների հաշվառում,

- սահմանել քվոտայի հասկացությունը, որը թույլ կտա Կառավարությանը կարգավորել օտարերկրյա քաղաքացիներին տրամադրվող կացության կարգավիճակների սահմանաչափն՝ ըստ կացության կարգավիճակների տեսակի, քանակի և հիմքերի,
- հստակեցնել ներդրումներ իրականացնելու և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու մտադրություն ունեցող օտարերկրացիների օրինական կացության կազմակերպման գործընթացը: Գործող կարգավորումներով օտարերկրյա քաղաքացիները կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացնելու հիմքով կացության կարգավիճակի դիմում ներկայացնելու համար գումարի որևէ շեմ սահմանված չէ, առաջարկվում է սահմանել համապատասխան շեմ ձեռնարկատիրական գործունեության հիմքով կացության կարգավիճակ ստանալու համար:

E-DRAFT ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ

Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատման անցկացման կարգը սահմանելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Քանի որ ներկայումս Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատման անցկացման կարգը կարգավորված չէ, նախատեսվում է նախագծի հաստատմամբ կարգավորել պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատման անցկացման հետ կապված հարաբերությունները:

«ՀՀ կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 4-ի N 1264-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

- ՀՀ կառավարության 04.09.2025թ. N1264-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքները սեփական կարիքների համար օգտագործման դեպքում այդ ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկությունը հարկային մարմնի միասնական շտեմարան փոխանցվում է Կառավարության 10.03.2022թ. N312-Լ որոշմանը համապատասխան՝ ԵՏՄ շրջանակներում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման ազգային օպերատորի մշակած և պետական եկամուտների կոմիտեի հետ համաձայնեցված բջջային հավելվածով: Նույն որոշման հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ մինչև հաշվարկային փաստաթուղթն ստորագրելը (վավերացնելը) հաշվարկային փաստաթղթով մատակարարված դրոշմավորված ապրանքն ստացողի կողմից վերջնական սպառման ենթակա լինելու դեպքում ստացողը կարող է կատարել «Ապրանքը նախատեսված է վերջնական սպառման համար» նշում, որից հետո հաշվարկային փաստաթղթում ներառված ապրանքների դրոշմավորման ծածկագրերն ինքնաշխատ եղանակով ստանում են «Շրջանառությունից հանված» կարգավիճակ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել, որ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքները սեփական կարիքների համար օգտագործման դեպքում այդ ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկությունը հարկային մարմնի միասնական շտեմարան կարող է փոխանցվել նաև հարկային մարմնի էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի համակարգով (e-invoicing):

«Պետական տուրքի մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է վերանայել պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և օգտակար հանածոների օգտագործման թույլտվությունների համար տարեկան պետական տուրքի դրույքաչափերը: Մասնավորապես առաջարկվում է վերանայել հետևյալ դրույքաչափերը.
 1. ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի համար՝ 10 մլն դրամի փոխարեն 50 մլն դրամ,
 2. վառելիքաէներգետիկ հումքի յուրաքանչյուր հանքավայրի համար՝ 50 հազ. դրամի փոխարեն 250 հազ. դրամ,
 3. շինանյութերի արտադրության հումքի յուրաքանչյուր հանքավայրի համար՝ 500 հազ. դրամի փոխարեն 2,5 մլն դրամ,
 4. վանկատի յուրաքանչյուր հանքավայրի համար 100 հազ. դրամի փոխարեն 5 մլն. դրամ,
 5. ածխաթու գազ ստանալու կամ բուժական նպատակով հանքային ջրերի յուրաքանչյուր հանքավայրի կամ հանքահորի համար՝ 500 հազ դրամի փոխարեն 2.5 մլն. դրամ,
 6. միաժամանակ, սահմանվում են նաև սև մետաղների հանքավայրերի համար 50 մլն. դրամի, իսկ աղի հանքավայրերի համար՝ 2,5 մլն. դրամի չափով տարեկան պետական տուրքի դրույքաչափեր:
- Նախատեսվում է, որ փոփոխությունն ուժի մեջ կմտնի 2027 թվականի հունվարի 1-ից, և կտարածվի նաև գործող թույլտվությունների վրա:

ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1125-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

- ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի «Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 1125-Լ որոշման մեջ Ծրագրի վերջնաժամկետը առաջարկվում է սահմանել 2026 թվականի սեպտեմբերի 1-ը:

«ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ Օրենքի նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

- Առաջարկվում է պարզեցնել սեփական հողամասերում փոքրածավալ կավագործական գործունեության կարգը: Քաղաքացիներն ու իրավաբանական անձինք հնարավորություն կստանան առանց ընդերքօգտագործման իրավունքի ձևակերպման իրականացնել կավի հանույթ՝ տարեկան մինչև 30 մ2 ծավալով և մինչև 5 մետր խորությամբ: